



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. օգոստոսին /վերլուծություն/

2004թ. օգոստոսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 8243 գործարքներ, որոնց քանակը 2003թ. օգոստոսի համեմատ աճել է 29.0 %-ով, իսկ 2004թ. հուլիսի համեմատ՝ նվազել 2.9 %-ով:

2004թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3416 օտարման գործարքների 90.2 %-ը կազմել են առուվաճառքները, 9.2 %-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 48.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 44.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. օգոստոսին, 2003թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 22.0%-ով, իսկ 2004թ. հուլիսի համեմատ նվազել՝ 3.4 %-ով: 2004թ. օգոստոսին Երևան քաղաքում անշարժ գույքի 1434 առուվաճառքի գործարքների 60.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում քաղաքում, 2003թ. օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.3 %-ով, իսկ 2004թ. հուլիսի համեմատ աճել՝ 1.4%-ով:

2004թ. օգոստոսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. օգոստոսին համարժեք է 517.6 դրամի /

Համայքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. օգոստոսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		օգոստոս 2003թ.	օգոստոս 2004թ.	հուլիս 2004թ.
Կենտրոն	250.0-970.0	391.7	471.5	464.8
Արաբկիր	200.0-560.0	294.3	370.9	366.5
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	181.8	227.5	224.6
Նոր-Նորք	115.0-250.0	141	195.7	191.8
Ավան	120.0-230.0	139	189.5	183.4
Էրեբունի	120.0-300.0	151.1	181.8	178.8
Շենգավիթ	120.0-270.0	150.8	215.5	210.5
Դավթաշեն	130.0-320.0	177.3	234.2	229.3
Աջափնյակ	120.0-300.0	156.2	213.6	208.4
Մալաթիա-Սեբաստիա	120.0-270.0	146.9	211.7	206.1
Նուբարաշեն	65.0-120.0	68.5	80.2	79.5
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	181.7	235.6	231.2

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. օգոստոսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.9%:

2004թ. օգոստոսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 459 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. օգոստոսի համեմատ աճել է 1.3%-ով, իսկ 2004թ. հուլիսի համեմատ նվազել՝ 3.4%-ով:

2004թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. օգոստոսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			օգոստոս 2003թ.	օգոստոս 2004թ.	հունիս 2004թ.
Արագածոտն	<i>Աշտարակ</i>	22.0-95.0	62.5	66.5	63.2
	<i>Ապարան</i>	18.0-50.0	27.2	37.5	35.2
	<i>Թային</i>	18.0-40.0	25.1	31.8	31.8
Արարատ	<i>Արտաշատ</i>	22.0-88.0	54.5	56.2	55.8
	<i>Մասիս</i>	20.0-90.0	54.4	61.5	60.2
	<i>Վեդի</i>	20.0-60.0	31.6	42.5	42.5
	<i>Արարատ</i>	22.0-50.0	31.5	39.9	39.9
Արմավիր	<i>Վաղարշապատ</i>	35.0-110.0	84.3	100.6	91.1
	<i>Արմավիր</i>	21.0-80.0	45.5	62.5	58.7
	<i>Մեծամոր</i>	17.0-50.0	30.8	32.6	32.6
Գեղարքունիք	<i>Սևան</i>	20.0-50.0	30.5	34.8	34.8
	<i>Գավառ</i>	20.0-50.0	30.3	33.6	33.6
	<i>Մարտունի</i>	18.0-60.0	29.5	36.6	34.2
	<i>Վարդենիս</i>	10.0-35.0	17.2	17.6	17.6
	<i>Ճամբարակ</i>	13.0-30.0	16.5	17.9	17.9
Լոռի	<i>Վանաձոր</i>	30.0-90.0	60.9	62.3	62.3
	<i>Ստեփանավան</i>	20.0-48.0	33.2	36.5	36.2
	<i>Սպիտակ</i>	17.0-50.0	23.8	38.8	36.9
	<i>Ալավերդի</i>	15.0-40.0	25.4	26.5	25.8
	<i>Տաշիր</i>	15.0-40.0	19.3	25.5	25.2
Կոտայք	<i>Աբովյան</i>	40.0-150.0	83.9	97.8	93.5
	<i>Նոր Հաճն</i>	35.0-100.0	52.1	65.8	63.4
	<i>Բյուրեղավան</i>	15.0-60.0	35.2	45.6	41.2
	<i>Եղվարդ</i>	28.0-65.0	40.5	50.5	47.5
	<i>Հրազդան</i>	18.0-65.0	30.7	40.5	38.2
	<i>Ծաղկաձոր</i>	22.0-100.0	75.7	85.6	82.6
	<i>Չարենցավան</i>	13.0-55.0	31.1	40.5	38.8
Շիրակ	<i>Գյումրի</i>	30.0-110.0	71.7	75.2	72.3
	<i>Արթիկ</i>	17.0-45.0	25.2	31.4	31.4
	<i>Մարալիկ</i>	15.0-33.0	23.6	28.4	28.4
Սյունիք	<i>Գորիս</i>	21.0-50.0	29.6	37.5	35.8
	<i>Կապան</i>	18.0-52.0	29.1	33.8	33.8
	<i>Միսիան</i>	17.0-48.0	27.5	35.7	34.6
	<i>Մեղրի</i>	18.0-58.0	25.1	25.4	25.4
	<i>Ագարակ</i>	18.0-50.0	22.6	25.2	25.2
	<i>Քաջարան</i>	13.0-30.0	18.4	19.9	19.9
Վայոց Ձոր	<i>Վայք</i>	15.0-48.0	35.3	38.5	37.3
	<i>Եղեգնաձոր</i>	20.0-60.0	46.8	49.2	49.2
	<i>Ջերմուկ</i>	18.0-90.0	41.1	50.0	43.6
Տավուշ	<i>Դիլիջան</i>	15.0-54.0	36.2	42.8	41.7
	<i>Իջևան</i>	23.0-80.0	40.3	51.0	49.6
	<i>Բերդ</i>	15.0-43.0	29.2	31.5	30.3
	<i>Նոյեմբերյան</i>	15.0-45.0	26.7	27.7	27.7

2004թ. օգոստոսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների ամսեկան աճը կազմել է 3.5%:

2004թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 459 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 120, մյուս մարզերում միասին վերցրած՝ 339: 2004թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 4.0%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 2.4 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 4.5%-ով: 2003թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 26.4%-ով, ընդ որում Երևանում՝ 22.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 27.9%-ով:

2004թ. օգոստոսին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. օգոստոսին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		օգոստոս 2003թ.	օգոստոս 2004թ.	հուլիս 2004թ.
Կենտրոն	255.0-990.0	398.0	475.2	472.8
Արաբկիր	205.0-580.0	297.0	383.6	382.5
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	184.0	227.9	225.6
Նորք-Մարաշ	120.0-450.0	295.0	338.6	337.3
Ավան	125.0-280.0	141.0	189.9	188.2
Էրեբունի	130.0-320.0	153.0	185.5	184.2
Շենգավիթ	120.0-300.0	152.0	216.2	211.1
Դավթաշեն	140.0-350.0	180.0	234.7	230.8
Աջափնյակ	125.0-320.0	158.0	213.9	212.2
Մալաթիա-Սեբաստիա	125.0-300.0	148.0	211.9	210.2
Նուբարաշեն	65.0-130.0	71.5	81.2	81.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-990.0	198.0	250.8	248.7

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. օգոստոսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 0.8%:

2004թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. օգոստոսին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			օգոստոս 2003թ.	օգոստոս 2004թ.	հուլիս 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.6	86.1	85.4
	Ապարան	25.0-60.0	38.8	39.0	38.9
	Թալին	20.0-65.0	28.1	33.4	33.4
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.7	62.1	62.1
	Մասիս	50.0-90.0	62.4	63.5	63.4
	Վեդի	25.0-70.0	36.3	46.5	46.5
	Արարատ	20.0-65.0	37.4	41.5	41.0
Արմավիր	Վաղարշապատ	80.0-130.0	89.4	101.9	92.1
	Արմավիր	35.0-90.0	52.2	63.1	59.4
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.4	36.4	36.4
	Գավառ	20.0-60.0	39.9	39.9	39.9
	Մարտունի	20.0-60.0	33.8	37.4	36.6
	Վարդենիս	15.0-50.0	21.3	21.3	21.3
	Ճամբարակ	15.0-50.0	19.1	20.3	20.3
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	68.5	70.0	69.9
	Ստեփանավան	15.0-60.0	33.5	38.2	37.7
	Սպիտակ	20.0-60.0	24.1	39.5	38.0
	Ալավերդի	15.0-50.0	25.8	27.5	27.1
	Տաշիր	15.0-55.0	19.9	26.1	26.0
Կոտայք	Աբովյան	70.0-120.0	92.2	98.4	94.3
	Նոր Հաճն	40.0-90.0	54.2	66.3	64.2
	Բյուրեղավան	25.0-70.0	38.2	46.1	41.9
	Եղվարդ	40.0-80.0	47.2	52.1	48.2
	Հրազդան	25.0-65.0	39.9	40.7	40.6
	Ծաղկաձոր	70.0-120.0	85.1	91.2	87.9
	Չարենցավան	25.0-65.0	33.3	41.0	39.5
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	90.7	91.6	91.6
	Արթիկ	20.0-55.0	28.6	32.8	32.4
	Մարայիկ	15.0-50.0	23.9	29.4	29.3
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.5	38.0	37.6
	Կապան	20.0-60.0	31.0	35.3	35.1
	Միսիան	20.0-60.0	28.6	36.5	35.2
	Մեղրի	15.0-50.0	28.2	28.2	28.2
	Ագարակ	15.0-50.0	25.0	28.2	28.1
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	36.9	39.5	38.4
	Եղեգնաձոր	35.0-80.0	49.1	50.1	49.9
	Ջերմուկ	25.0-65.0	43.2	44.3	44.3
Տավուշ	Դիլիջան	20.0-70.0	39.1	44.9	42.4
	Իջևան	35.0-80.0	41.2	52.6	50.4
	Բերդ	20.0-60.0	30.8	31.7	31.4
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.7	30.9	30.8

2004թ. օգոստոսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.4%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. օգոստոսին հանրապետությունում օտարվել են 584.03 հա /այդ թվում 57.40 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 499.21 հա կազմել

են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 577.36 հա հողերի /այդ թվում 55.00 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 495.67 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 4 միավոր արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 2 միավոր /0.46 հա/ Կոտայքի մարզում և 2 միավոր /1.02 հա/ Երևանում, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1 միավոր /0.21 հա/ Գեղարքունիքի մարզում:

Օտարված 3.46 հա /այդ թվում 0.44 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 2.38 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Հանրապետությունում փոխանակման միջոցով օտարվել են 3.21 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 1.97 հա Երևանում/, որից 1.16 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 295.30 հա, որից 290.94 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2004թ. օգոստոսին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	133	22.84	37	20.21	0	0.00	76	5.87	31	5.06
Արագածոտն	1	2.70	0	0.00	0	0.00	20	7.28	31	4.22	0	0.00
Արարատ	26	56.73	13	1.33	3	0.24	96	36.96	48	4.04	0	0.00
Արմավիր	13	229.05	11	1.10	1	0.02	76	61.90	33	3.24	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	4	5.69	2	0.06	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	1	0.005	14	5.90	2	0.14	0	0.00
Կոտայք	3	0.30	0	0.00	0	0.00	91	43.25	104	10.24	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	3	0.04	6	6.17	9	0.39	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	18	24.94	2	0.52	0	0.00
Վայոց ձոր	2	13.20	0	0.00	0	0.00	1	0.22	2	0.21	0	0.00
Տավուշ	0	0.00	1	0.06	0	0.00	4	1.40	2	0.18	0	0.00
Ընդամենը	45	301.98	158	25.33	45	20.52	330	193.71	311	29.11	31	5.06

2004թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են հողերի 925 առուվաճառքի գործարքներ, այդ թվում 375-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 545-ը՝ բնակավայրերի հողերի նկատմամբ:

2004թ. օգոստոսին հողերի առուվաճառքներից 216-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 146-ը՝ Երևանում /28.72 հա/, իսկ 70-ը՝ մյուս մարզերում /291.45 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 43 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /288.77 հա/, 151-ը՝ /24.46 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 22-ը՝ հասարակական կառուցապատման /6.94 հա/ հողեր:

2004թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 375 գործարքներ, այդ թվում աճուրդով՝ 43, դատարանի վճռով՝ 3 և ուղղակի վաճառքով՝ 2 գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	2.70	765.0	765.0	765.0	17	4.33	800.0	10000.0	2800.0
Ապարան								200.0	1700.0	530.0
Թալին						1	0.70	200.0	1680.0	460.0
Ծաղկահովիտ						2	2.25	170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ	10	28.79	240.0	3145.0	1890.0	27	6.13	740.0	12000.0	2180.0
Մասիս	8	8.34	455.0	97795.0	12900.0	54	23.02	400.0	8800.0	1550.0
Վեդի	8	19.60	105.0	2855.0	1120.0	15	7.81	450.0	7200.0	1300.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	190.00	45.0	45.0	45.0	19	15.27	650.0	4650.0	1410.0
Բաղրամյան						14	20.99	200.0	1500.0	540.0
Վաղարշապատ	12	39.05	150.0	26160.0	3445.0	41	25.16	980.0	14000.0	2150.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								420.0	1100.0	635.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի						2	0.19	100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						2	5.50	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Ալավերդի						14	5.90	360.0	5500.0	910.0
Գուգարք								500.0	6000.0	1780.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան								180.0	4000.0	460.0
Տաշիր								100.0	400.0	250.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	0.30	925.0	925.0	925.0	41	10.34	600.0	20000.0	5050.0
Եղվարդ						45	30.62	380.0	10000.0	3500.0
Հրազդան						4	1.82	250.0	6000.0	950.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						3	1.85	550.0	2500.0	740.0
Ամասիա								80.0	525.0	180.0
Անի						2	2.36	240.0	800.0	300.0
Աշոցք								60.0	210.0	150.0
Արթիկ						1	1.97	140.0	800.0	300.0
Սյունիքի մարզ										
Գորիս						10	12.74	200.0	1600.0	500.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի								400.0	4240.0	840.0
Միսիան						8	12.20	90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										

Եղեգնաձոր						1	0.22	260.0	4000.0	2200.0
Վայք								120.0	3400.0	900.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	2000.0	650.0
Իջևան								530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան						4	1.40	100.0	8340.0	620.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. օգոստոսին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 260 առուվաճառքի գործարքներ, որից 24-ը՝ աճուրդային վաճառքներ, 1-ը՝ ուղղակի վաճառք և 2-ը՝ դատարանի վճռով գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						31	42245.0	250.0	8000.0	2900.0
Ապարան								250.0	1400.0	340.0
Թալին								100.0	800.0	130.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	11	10900.0	290.0	520.0	475.0	8	7247.0	300.0	6000.0	900.0
Մասիս	2	2400.0	480.0	770.0	625.0	31	22970.0	300.0	20000.0	1100.0
Վեդի						8	8940.0	250.0	2200.0	700.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						7	5200.0	300.0	5000.0	1050.0
Բաղրամյան								180.0	600.0	210.0
Վաղարշապատ	11	11000.0	320.0	320.0	320.0	26	27200.0	300.0	10000.0	1650.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								300.0	2000.0	600.0
Ճամբարակ						2	587.0	100.0	300.0	150.0
Մարտունի								200.0	600.0	250.0
Սևան								200.0	2000.0	260.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						2	1370.0	150.0	5200.0	760.0
Սպիտակ								140.0	900.0	180.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						50	46187.0	300.0	10000.0	2000.0
Եղվարդ						49	51020.0	300.0	10000.0	2300.0
Հրազդան						5	5180.0	300.0	8000.0	1500.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	3496.0	250.0	3400.0	410.0

Ամսաթիվ								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ						1	400.0	150.0	900.0	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	5199.0	150.0	1200.0	400.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Միսիան								150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	960.0	150.0	2200.0	350.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան						2	1830.0	150.0	2200.0	600.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2004թ. օգոստոսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 2.66 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 4-ը Արարատի /0.95 հա/ 4-ը՝ Գեղարքունիքի /1.62 հա/ և 1-ը՝ Վայոց Ձորի /0.09 հա/մարզերում:

2004թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 718 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 22.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 20.8%-ով, իսկ 2003թ. օգոստոսի համեմատ աճել՝ 55.4%-ով:

2004թ. օգոստոսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 42 բնակարանների, 21 անհատական բնակելի տների, 194 հասարակական, 14 արտադրական նշանակության օբյեկտների, 443 միավոր հողերի և 4 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2004թ. օգոստոսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 63 վարձակալության գործարքների քանակները 2004թ. հուլիսի համեմատ նվազել են 42.2%-ով, իսկ 2003թ. օգոստոսի համեմատ աճել՝ 2.0 անգամ:

Ընդհանուր առմամբ, 2004թ. օգոստոսին հանրապետությունում վարձակալվել են 1869.69 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 39.78 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1782.66 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 6.96 հա բնակավայրերի, 21.77 հա արդյունաբերական օբյեկտների, 9.08 հա հատուկ պահպանվող տարածքների, 8.70 հա էներգետիկայի օբյեկտների, 0.75 հա անտառային հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ ծավալներ են արձանագրվել Արմավիրի մարզում՝ 522.53 հա, որից 521.96 հա գյուղատնտեսական նշանակության:

2004թ. օգոստոսին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 351.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. օգոստոսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	24	69.06
Արարատ	2	196.00	6	169.45
Արմավիր	0	0.00	10	521.96
Գեղարքունիք	1	5.00	22	208.90
Լոռի	0	0.00	25	31.58
Կոտայք	0	0.00	39	126.29
Շիրակ	0	0.00	18	51.45
Սյունիք	4	150.00	7	60.07
Վայոց Ձոր	0	0.00	33	189.80
Տավուշ	0	0.00	2	3.10
Ընդամենը	7	351.00	186	1431.67

2004թ. օգոստոսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 522 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.3%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. օգոստոսի համեմատ աճել է 75.8%-ով, իսկ 2004թ. հուլիսի համեմատ նվազել՝ 16.6%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 40.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /50.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.7%/, առանձնատների /17.4%/ և հողերի /5.7%/, նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 329 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. հուլիսի համեմատ, նվազել է 15.6%-ով, իսկ 2003թ. օգոստոսի համեմատ աճել՝ 75.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. օգոստոսին հանրապետությունում գրավադրվել են 209.62 հա /այդ թվում 0.38 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 208.90 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ ծավալներ են գրավադրվել Արարատի մարզում՝ 190.20 հա, որից 190.08հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2004թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 19 և 7 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2003թ. օգոստոսին համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 8.3%-ով, իսկ 2004թ. հուլիսի համեմատ մնացել է անփոփոխ: 2004թ. օգոստոսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կոտայքի և Շիրակի մարզերում՝ 19.2-ական %:

2004թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1537 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. օգոստոսի համեմատ աճել է 66.5%-ով, իսկ 2004թ. հուլիսի համեմատ՝ 10.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /54.3%/: